6539

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«11» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 080 - 24

Ձեռնարկողը՝ **Արարատի մարզի Արարատի համայնքապետարան**
ք. Արարատ, Շահումյան 34

Գործունեությունը՝ **Արարատ համայնքի Արարատ բնակավայրի Շահումյան 46 հասցեում մարզադահլիճի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն:**
Արարատի մարզ

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 080 - 24

«11» հունվար **2024թ.**

Արարատ համայնքի Արարատ բնակավայրի Շահումյան 46 հասցեում մարզադահլիճի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Արարատի մարզի Արարատի համայնքապետարան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Արարատ բնակավայր

Ներածական մաս. Արարատի համայնքապետարանի կողմից նախատեսվում է կառուցել փակ ունիվերսալ մարզադահլիճ Արարատ համայնքի Արարատ բնակավայրի Շահումյան 46 հասցեում: Ամենամոտ գտնվող շինությունը դպրոցն է, որը գտնվում է 16 մ հեռավորության վրա: Տարածքի տրանսպորտային մոտեցումներն ապահովվելու են Շահումյան և Աբովյան փողոցներից:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել Արարատի մարզի Արարատ համայնքի կողմից 2023 թվականի հուլիսի 8-ին տրամադրված N79/2 նախագծման թույլտվությունը: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Նախատեսվող մարզադահլիճը հանդիսանալու է տվյալ հողատարածքում առկա մարզադպրոցի տրամաբանական շարունակությունը և կառուցվելու է գործող մարզադպրոցի շենքից 1500 մմ հեռավորության վրա:

Մարզադահլիճը նախատեսված է լինելու ուսումնական և ուսումնամարզական պարապմունքների, հանրապետական մակարդակի մինի ֆուտբոլի, բասկետբոլի, սեղանի

թենիսի մրցումների համար, որտեղ նախատեսված են նաև տարածքներ մարտարվեստի և ծանրամարտի համար: Հիմնական մարզաձևը բասկետբոլն է:

Մարզադահլիճում նախատեսված են 5 շարք նստատեղեր, ընդհանուր 500 տեղով, ինչպես նաև տրիբունայի հատված:

Ընդլայնված տարածքի ընդհանուր մակերեսը կազմելու է 4816,1 քմ: Նախատեսվող մարզադահլիճի մակերեսը՝ ներառյալ կից սպասարկող օժանդակ հատվածը, կկազմի 2133 քմ: Գոյություն ունեցող մարզադպրոցի մակերեսը 476 քմ է :

Բարեկարգման և կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմելու է 2207.1 քմ, որից բարեկարգման մակերեսը 1585.1 քմ է, իսկ կանաչապատման մակերեսը՝ 622 քմ:

Մարզադահլիճը նախատեսվում է կառուցել 7,8 մ բարձրությամբ պատերով տուֆ քարից՝ սվաղված ցեմենտավազի սվաղով, երկաթբետոնյա կարկասային կոնստրուկտիվ համակարգով, հարթ հատակով և տանիքով: Տանիքի ծածկը կլինի ցինկապատ, պրոֆիլավոր թիթեղով, վերնածածկը հավաքովի ծածկի երկաթբետոնե սալերով գոլորշիամեկուսիչ թաղանթից, ջերմամեկուսիչ հանքային բամբակի շերտից՝ 10 մմ և էքստրուդացված փրփրապոլիստիրոլի շերտից՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Մարզադահլիճին կից տեղակայված է լինելու նրան սպասարկող երկհարկ օժանդակ հատվածը, որտեղ տեղակայված են լինելու բոլոր այն սենքերը, որոնք անհրաժեշտ են մարզադահլիճի համար և ներառում են՝

- սահմանափակ հնարավորություններով անձանց համար նախատեսված մարզասրահ՝ համապատասխան սարքավորումներով,
- ծանրաձողի մարզասրահ՝ ուսումնական պարապմունքների անցկացման համար,
- բռնցքամարտի մարզասրահ,
- մարզասրահ(մարզասարքերի),
- մարզիչների սենյակ՝ համապատասխան սանհանգույցով և լոգախցիկներով,
- առանձին սանհանգույցներ՝ նախատեսված սահմանափակ հնարավորություններով անձանց համար՝ ըստ սեռերի,
- մարզագույքի պահեստ՝ կախված մարզաձևից,
- բուժկետ,
- ինժեներական սենյակներ, ինժեներատնտեսական բլոկ:

Մարզադահլիճի բոլոր տարածքներն ապահովված կլինեն անհրաժեշտ թվով տարհանման ելքերով՝ հագեցած գործող ստանդարտներին համապատասխան թեքահարթակներով, նաև սահմանափակ հնարավորություններով անձանց համար: Հանդերձարանները փակված կլինեն միջանցքով, ինչը թույլ կտա բացառել մարզիկների և հանդիսատեսի հոսքերի հատումը:

Տարածքն ապահովված է լինելու ինժեներական բոլոր ենթակառուցվածքներով: Ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին: Տարածքում առկա է կոյուղի և ջրամատակարարման ցանց, որոնց նախատեսվում է միացնել նոր կառուցվող մարզադահլիճի արտաքին ցանցերը: Տարածքի անձրևաջրերի հավաքման և հեռացման ցացը նախատեսվում է միացնել Շահումյան փողոցում առկա անձրևաջրերի հեռացման ցանցին: Ջրամատակարարման աղբյուրը՝ գոյություն ունեցող 10 մմ տրամագծով ջրամատակարարման քաղաքային ցանցն է, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել տարածքի հարևանությամբ անցնող DN=350մմ կոյուղու արտաքին ցանցին: Կեղտաջրերի բոլոր ընդունիչներն ունեն հիդրավլիկ փականներ:

Մարզադահլիճը նախատեսվում է ջեռուցել և օդափոխել այդ նպատակով նախատեսված 220 կՎտ հզորությամբ էլեկտրական կաթսայով, որը միանում է էլեկտրական ցանցին առանձին ճյուղով: Տաք ջրամատակարարման համակարգի ջերմամատակարարման աղբյուրը 90 կՎտ հզորությամբ էլեկտրական կաթսայատունն է: Մարզադահլիճի էլեկտրամատակարարման նպատակով նախատեսվում է 0,4 կՎտ նոր մալուխի անցկացում ստորգետնյա եղանակով՝ ենթակայանից մինչև բաշխիչ ցանց: Էներգախնայողության նպատակով նախատեսված են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում՝ ջերմային կորուստները նվազեցնելու նպատակով: Արտաքին կոնստրուկցիաներն ու օդատարները ջերմամեկուսացված կլինեն:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է 18.5 ամիս:

Շինաշխատանքների ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի 7942 մ^3, որից ետլիցքը՝ շուրջ 3998 մ^3: Շինաղբի ընդհանուր քանակը կկազմի 3944 մ^3, ինչը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի աղբամաններով:

Ամբողջ տարածքը ցանկապատված և առանձնացված է լինելու, ապահովված կլինի բարձր ձայնամեկուսացումը:

Կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Բարեկարգման աշխատանքները ներառում են՝ հեղեղատարի տեղադրում, ավտոճանապարհների և մայթերի բարեկարգում, տեղանքի հարավային մասում բաց մարզահրապարակների ստեղծում, բացօդյա կայանատեղիների կազմակերպում՝ նոր մարզադահլիճից դեպի արևելք: Տարածքի կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով ու բուսականությամբ: Բակային հատվածն ապահովված է լինելու կանաչապատ միջավայրով՝ տարբեր դեկորատիվ ծառերի և թփերի համադրմամբ, հանգստի և մարզական գոտիներով, խաղահրապարակներով, ճեմուղիներով:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրապահանջն ապահովվելու է տարածքում առկա քաղաքային ջրագծից:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ գործունեության իրականացման տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան, բնության և պատմության հուշարձաններ հաշվառված չեն:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել ջրցան,
- շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կազմակերպել փակ ծածկով մեքենաներով,
- օգտագործումից առաջ հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով:
- բոլոր աշխատողներին ապահովել անհատական պաշտպանիչ միջոցներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի քանակական, որակական չափումներ՝ ամսական մեկ անգամ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:
- շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ,
- կենսաբազմազանության մոնիթորինգ շինարարության ընթացքում՝ ամիսը մեկ հաճախականությամբ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տրամադրել 900 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատ համայնքի Արարատ բնակավայրի Շահումյան 46 հասցեում մարզադահլիճի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ՝ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:
-Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
-Մարդու առողջության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, իրականացնել ցանկապատում, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ և այլն:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական,

գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
-Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի կողմից ներկայացված Արարատ համայնքի Արարատ բնակավայրի Շահումյան 46 հասցեում մարզադահլիճի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան